

Հայաստանի հրատարակչական ոլորտում հեղինակային և հրատարակչական իրավունքների իրավակիրարկման խնդիրները

Հռոմեական կայսրության օրոք, երբ ընթերցանությունն ու գրքի առևտուրը ծաղկում էին ապրում, հրատարակիչները հեղինակային իրավունքի մասին նույնիսկ չէին էլ մտածում, քանի որ տեքստը բազմացնելու համար անհրաժեշտ էր վարձել ձեռագիր գրքի բնօրինակից արտագրող ստրուկների, որոնց համար այն ժամանակներում մեծ գումար էին պահանջում: Իսկ, ահա, հեղինակներին հոնորարի փոխարեն նվիրում էին արտագրված գրքի մեկ օրինակ:

Միջնադարում, որոշ երկրներում, հեղինակային իրավունքին տեր դառնալու համար հեղինակները պարտավոր էին խնդրանքով դիմել թագավորին, սակայն այդ իրավունքից իրականում նրանք գրեթե չէին օգտվում, քանի որ, հեղինակների խորը համոզմամբ, ստեղծագործ մուսան Աստծո պարզն էր, իսկ իրենք՝ սոսկ այն վերարտադրողներ և, հետևապես, Բարձրյալին պատկանող իրավունքն իրենք չէին կարող սեփականացնել կամ դրա դիմաց հոնորար պահանջել:

Գուտենբերգի տպագրական մեքենայի հանճարեղ հայտնագործությունը /15-րդ դարի 40-ականներ/ նպաստեց հրատարակչի իրավունքների հաստատմանը, և մինչև հեղինակային իրավունքի մասին առաջին օրենքի ընդունումը /Աննա թագուհու 1710 թ. հանրահայտ հրովարտակը/, ավելի քան 260 տարի, հրատարակիչներն անվերապահորեն օգտվում էին պետության տրամադրած արտոնություններից՝ իրենց ֆինանսական միջոցները ներդնելով գրքատպության եկամտաբեր արտադրության մեջ ու բարձր շահույթ ստանալով: Դրանով նրանք նպաստում էին գրահրատարակչական ոլորտի կայացմանը, նորանոր և բարձրարվեստ ստեղծագործությունների արարմանը, գրքի բազմացմանը /այստեղից էլ՝ Copy+right բազմացնելու իրավունք/, տարածմանն ու ընթերցանության զարգացմանը:

Աննա թագուհու 1710 թ. հրովարտակով վերջ դրվեց գրքերը վերարտադրելու՝ հրատարակիչների մենաշնորհին, հեղինակները վերջապես սկսեցին լիարժեք օգտվել իրենց իրավունքներից:

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պատմության մեջ նոր դարաշրջանի սկիզբ դրվեց 1886 թ. ընդունված «Գրական և գեղարվեստական

ստեղծագործությունների պաշտպանության մասին» Բեռնի հանրահայտ կոնվենցիայի շնորհիվ: Այս փաստաթղթի հրատարակումից 10 տարի անց հրատարակիչները միավորվեցին մեկ կազմակերպության մեջ՝ ստեղծելով Հրատարակիչների միջազգային ասոցիացիան:

XIX դարում հայ հրատարակիչներն ու հեղինակները շուրջ 20 ասոցիացիաներ ու միավորումներ հիմնադրեցին աշխարհի տարբեր քաղաքներում: Սակայն նրանցից առավել ակտիվ գործունեություն ծավալեց 1879 թ. հիմնադրված «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակչական ընկերությունը», որին անդամագրվեցին ժամանակի անվանի հայ գործիչները, գրողները, թարգմանիչներն ու գրականագետները: Նրանք լրջորեն էին վերաբերվում հեղինակային իրավունքների պահպանությանը, խիստ օրինապահ էին, հետևում ու հավատարիմ էին մնում «Գրական և գեղարվեստական երկերի պահպանության մասին» Բեռնի կոնվենցիայի հիմնադրություններին:

Վերն ասվածի լավագույն ապացույցն է 1886 թ. աշնանը անվանի գրող ու թարգմանիչ Վրթանես Փափագյանի և ֆրանսիացի տաղանդավոր գրող Ալֆոնս Դոդեի միջև կայացած նամակագրությունը՝ վերջինիս գործերի թարգմանության հեղինակային իրավունքները ձեռք բերելու համար:

Վրթանես Փափագյանը, որը չորս տարի ուսանել էր Ժնևում և հիմնովին ուսումնասիրել ֆրանսիական գրականությունը, հայրենիք վերադառնալուց հետո Թիֆլիսի հրատարակչական ընկերությանն է ուղարկում հետևյալ նամակ-առաջարկությունը. «Մտածելով, որ ցանկալի կլիներ Ալֆոնս Դոդեի մանր, գողտրիկ գործերը հրատարակել հայերեն լեզվով, ես ձեռնարկել եմ թարգմանություն կատարել ուղղակի ֆրանսերենից»:

Հրատարակչի համաձայնությունը ստանալուց հետո Վրթ. Փափագյանը դիմում է Ալ. Դոդեին՝ «Ընտիր պատմվածքներ» խորագրի ներքո նրա գործերի հայերեն լույսընծայման թույլտվությունը ստանալու նպատակով.

«Սիրելի ուսուցիչ,- գրում է Վրթ. Փափագյանը,- ձեռնարկել եմ հայերեն լեզվով թարգմանելու Ձեր պատմվածքներից մի հատընտիր ժողովածու, և խնդրում եմ բարեհաճել Ձեր արտոնությունը հաղորդել ինձ:

Իմ հայ նվաստ պատմիչիս նպատակն է դրանով ծանոթացնել Ձեզ հայրենակիցներին, որոնք սիրում են գրույցներ և ունեն շատ շատերն էլ:

Դուք շատ հիացողներ ունիք մեր այն գրագետ երիտասարդության մեջ, որ գիտե և Ձեր լեզուն: Ես ուզում եմ Ձեր գործի հետ ծանոթացնել ժողովրդին, նրանց, որոնք գիտեն խորապես թափանցել գրույցների ոգու մեջ: Մայրերը, աղջիկները, աշխատավորները և մեր ժողովրդական երգիչները՝ այսինքն նրանք, որոնք սիրում, նրանք, որոնք տանջվում, նրանք, որոնք երգում են՝ երախտապարտ են լինելու Ձեր գողտրիկ գրույցների և Ձեր այն մեծ բարության համար, որով լցրել եք այդ գրույցները:

Մեր ժողովուրդը, որ իր բոլոր վշտերի ժամանակ միշտ սիրել է բանաստեղծությունը և նրանով է պահպանվել ու իր հայրենական մի քանի գրույցներով և ավանդություններով, այս բուպեիս ենթարկված լինելով ահռելի վշտերի, գուցե մի ժամ մխիթարություն գտնի Ձեր գործերով, որոնք լի են եղբայրական քնքշությամբ դեպի թշվառությունը:

Մեզ մնում է այժմ դիմել միայն սրտի և մտքի տեր մարդկանց՝ բանաստեղծներին. նրանց միջոցով է, որ մենք ուզել ենք սիրել Արդարությունը և Ազատությունը և մենք ապահով ենք, որ ընդհանուր անտարբերության այս ժամանակամիջոցում, նրանք գոնե մեր կողմն են:

Սպասելով, որ բարեհաճեիք պատվել ինձ Ձեր պատասխանով, խնդրում եմ, սիրելի ուսուցիչ, ընդունել իմ հիացման արտահայտությունը Ձեր պաշտելի և մեծահոգի գործունեության առթիվ»:

Վ. Փափազյան

Ալ. Դոդեն ստանալով հայ գրողի նամակը, իր մահից երկու ամիս առաջ հետևյալ երկտողն է գրում.

«Պարոն, հոժարությամբ արտոնում եմ Ձեզ՝ լույս ընծայելու իմ պատմվածքների հայերեն լեզվով թարգմանությունը:

Այս անվարձ իրավունքը, որը տալիս եմ Ձեզ, մի շատ թույլ ապացույց է դեպի ձեր դժբախտ ազգն ունեցած համակրությանս»:

Եվ գիրքը, որի առաջին էջին զետեղված էր Ա.Դոդեի նամակը, լույս է տեսնում 1897 թվականին:

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պահպանությունը միանգամայն այլ

իրավիճակում հայտնվեց: Շուրջ յոթ տասնամյակ (1920-1990 թթ.) գրահրատարակչական համալիրը Հայաստանում գործում էր պետական-պլանային համակարգի օրենքներով, կուսակցական ու կառավարական վերադաս աստիճանների խստագույն հսկողության ներքո՝ կատարելով պետության գաղափարախոսի ծանր ու դժվարին առաքելությունը: Գրքարտադրությունը պետության մենաշնորհն էր, իսկ պետական պլանը օրենք էր բոլորի համար:

Սկսած 1920 թվականի նոյեմբերից, 70 տարի շարունակ, Հայաստանում, ինչպես նախկին ԽՍՀՄ հանրապետություններում գործում էր Հեղինակային իրավունքի համամիութենական գործակալության (БААП) մասնաճյուղը:

Ինչպես պետական հրատարակչությունների, պոլիգրաֆիական ձեռնարկությունների և գրավաճառ ցանցի գործունեությունը, այնպես էլ հեղինակային իրավունքի պահպանության ու հոնորարային վարձատրության քաղաքականությունը կանոնակարգվում էր կուսակցության համապատասխան որոշումներով, կարգադրություններով, հրահանգներով, զանազան փաստաթղթերով ու այլ պայմանագրերով:

Հրատարակչություններն էլ իրենց հերթին ունեին որոշակի թեմատիկայով գրականության տպագրության մենաշնորհ:

1991թ Հայաստանում հաստատված շուկայական տնտեսավարման գործընթացը գրահրատարակության և հեղինակային իրավունքի ոլորտները նույնպես ազատագրեց պետական պլանային համակարգի կապանքներից՝ ստեղծելով անկաշկանդ գործելու և արարելու աննախադեպ հնարավորություններ:

Բնականաբար, ուժը կորցրած համարվեցին նաև գրահրատարակչական գործին ու հեղինակային իրավունքին վերաբերող նախկին օրենսդրական և նորմատիվ ակտերն ու փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 1991թ. մարտի 5-ի թիվ 161 որոշմամբ հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեությունը նույնպես Հայաստանի Հանրապետության տարածքում դասվեց ազատ գործունեության տեսակների շարքը:

Տարերային ու հախուռն պոռթկումների այդ ժամանակահատվածում, երբ գրքի շուկան հեղեղվել էր նախկինում արգելված կամ անտիպ հրատարակություններով ու թարգմանական գրքերով, ոտնահարվում էին գրողների տարրական պահանջները, լույս էին տեսնում հրատարակչական չափանիշների կոպիտ խախտումներով,

անորակ և անհրապույր ձևավորմամբ, լեզվական խաթարումներով ու թարգմանական խոտանով լի գրքեր, որոնց հեղինակները չնչին վարձատրություն էին ստանում իրենց ստեղծագործական դժվարին աշխատանքի դիմաց:

Անցման շրջանի առաջին տարիներին սկիզբ առավ նաև համակարգչային բուժը: Գրահրատարակիչները բախվեցին դժվարընթեռնելի տառաստեսակների, ինչպես նաև ուղղագրության խառնաշփոթից ծագած խոչընդոտներին: Իսկ ահա ասպարեզում հայտնված նորընծա մի քանի տասնյակ տառաստեղծները նույնպես ոչ մի կերպ չէր կարողանում պաշտպանել իրենց հեղինակային իրավունքները և որևէ փոխհատուցում չէին ստանում:

Գրքի առևտրի ետխորհրդային բուժը կարճ ժամանակ անց իսպառ դադարեց, շուտով մարեց նաև հետաքրքրությունը գրքի և ընթերցանության նկատմամբ: Հանրապետության ավելի քան 150 գրախանութների 90 տոկոսը ընդմիջտ հրաժեշտ տվեց գրքին՝ այն փոխարինելով այլ ապրանքներով:

Գրահրատարակչական և Գրադարանային գործի, Փաստաթղթերի պարտադիր օրինակի, Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ համապատասխան օրենքների բացակայության պայմաններում Ազգային գրապալատի գրապահոցն ու գրադարանները երկար ժամանակով զրկվեցին գրականության պարտադիր օրինակներով համալրվելու հնարավորությունից, իսկ գիրքը, ապա նաև հեղինակներն ու հրատարակիչները զրկվեցին թե՛ պետության և թե՛ հասարակության ավանդական հովանավորությունից ու հոգատարությունից:

Գիրքը օտարվեց մեր իրականությունից ու հայտնվեց մայթեզրին, որովհետև պիտանի չէր որպես բիզնեսի առարկա: 1991-1995 թվականներին, երբ դեռևս ուժի մեջ չէր մտել հեղինակային և հրատարակչական իրավունքների ազգային օրենսդրությունը, անկախացած Հայաստանի գրահրատարակչական ոլորտում պատճենանենգության, հեղինակային իրավունքի ոտնահարման դեպքեր չէին արձանագրվում: Հրատարակվող գրքերի 90 տոկոսը այդ տարիներին բացառապես լույս էր տեսնում ՀՀ-ում գործող միջազգային տարբեր կազմակերպությունների, հիմնադրամների, զանազան հովանավորների, գործարարների կամ դեսպանատների տրամադրած ֆինանսական միջոցներով: Այդ գումարները հատկացվում էին միայն հեղինակների կամ թարգմանիչների հետ կնքված պայմանագրերի առկայության դեպքում: Պատվիրատուները խստիվ վերահսկում էին դրանց վճարմանը: Կարևոր

նախապայմաններից մեկն էլ գրքի նկատմամբ անհրաժեշտ պահանջարկի բացակայությունն էր: Հրատարակվող գրքերի գեղարվեստական ցածր մակարդակը նույնպես գիրքը դուրս էր մղում բիզնեսի ոլորտից, իսկ գրաշուկայում պատճենանենգությամբ զբաղվողներ գրեթե չկային: Ահա թե ինչու Հայաստանը, հեղինակային իրավունքի խախտումների առումով, օրինակելի երկրի համբավ էր ձեռք բերել:

Հեղինակային իրավունքի ոտնահարման դեպքերը հասկապես կանխվում էին Հայաստանում տպագրված թարգմանական գրքերի ասպարեզում: Այդ դրական երևույթը հետևանք էր այն բանի, որ արտերկրի գրական-գեղարվեստական երկերի թարգմանությունը հովանավորող միջազգային կազմակերպությունները նախապես վճարում կամ պարտադրում էին մեր հրատարակիչներին վճարելու հեղինակային հոնորարները, այլապես նրանք հրաժարվում էին տվյալ գրքի թարգմանությունը ֆինանսավորելուց: Մյուս կողմից՝ մեր հրատարակիչները հազվադեպ էին նախաձեռնում ներկրվող օտարալեզու գրքերի թարգմանությունը՝ որոնցից շատերի փոքր քանակությունները ներկրում էին գործիմաց գրավաճառները:

Այդուհանդերձ, երկրում այդ տարիներին հեղինակային և հրատարակչական իրավունքների որոշ խախտումներ տեղի էին ունենում:

Կարճ ժամանակ անց, հեղինակային և հարակից իրավունքների ազգային և միջազգային համակարգերում հանրապետության մասնակցությունն ապահովելու նպատակով ստեղծվեց ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությունը (ՀԻԱԳ):

1996 թվականին ընդունվեց ՀՀ օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»: Հեղինակները վերջապես ստացան այն փաստաթուղթը, որը կխթաներ և նոր շունչ կհաղորդեր հեղինակի ու հրատարակչի գործունեությանը: Սակայն այդ օրենքում հրատարակչական իրավունքի մասին գրեթե ոչինչ չէր նախատեսվում: 2000 թվականին կատարված փոփոխությունների մեջ նույնպես հրատարակչի իրավունքները գրեթե բացակայում էին: Եվ դա այն դեպքում, երբ որոշ երկրներում գրքի ձևավորման համար օրենսդրությամբ սահմանված է «հրատարակչի իրավունքը»:

Գերմանիայում, օրինակ, «Հեղինակային իրավունքի մասին» օրենքին զուգընթաց գործում է նաև դեռևս 1901թ. ընդունված «Հրատարակչական իրավունքի

մասին» օրենքը, որը կարգավորում է միայն հրատարակչի և հեղինակի իրավունքներն ու պարտականությունները:

Կան երկրներ, որտեղ օրենքով հաստատագրված է օտարերկրյա հրատարակչին վճարելիք եկամտամասի /ռոյալթի/ նվազագույն չափը:

Մեծ Բրիտանիայի «Հեղինակային իրավունքի, գեղակառուցման և արտոնագրի մասին» 1988թ. օրենքով ստեղծագործության հեղինակային իրավունքի առաջին տերը, սովորաբար, այդ ստեղծագործությունը ստեղծողն է, իսկ գրքի ձևավորման տերը՝ հրատարակիչը:

Ըստ «Հեղինակային իրավունքի մասին» ԱՄՆ 1976թ. օրենքի՝ պատվիրված կամ վճարովի ստեղծագործության իրավատերը հրատարակիչն է:

Չեխիայի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքով «հրատարակիչն իրավունք ունի վարձատրություն ստանալ իր կողմից հրատարակված ստեղծագործության՝ անձնական նպատակով օգտագործման համար օրինակ պատրաստելու դեպքում»:

1998 թվականին հիմնադրվեց Հրատարակիչների ազգային ասոցիացիան:

1999թ. փետրվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 10-րդ բաժնի 62-64 գլուխների 1100-1143 հոդվածների դրույթներով կարգավորվեց նաև ՀՀ տարածքում հեղինակային և հարակից իրավունքների պահպանության և պաշտպանության գործընթացը:

ՀՀ Քրեական օրենսգրքի 140 հոդվածի դրույթներով համապատասխան պատիժներ նախատեսվեցին հեղինակային և հարակից իրավունքների խախտման փաստերի համար՝ բավարար ապացույցների առկայության դեպքում:

2001թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ՀՀ Մաքսային օրենսգիրքը, որը լայն արտոնություններ էր սահմանում մտավոր սեփականության և հեղինակային իրավունքների պաշտպանության, ինչպես նաև գրքի և պոլիգրաֆիական նյութերի ներկրման ու արտահանման համար:

ՀՀ կառավարության 1999թ. ապրիլի 22-ի N 251 որոշմամբ հաստատվեցին գրականության և արվեստի ստեղծագործությունների օգտագործման որոշ տեսակների հրապարակային կատարման համար հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերը:

2000 թ. հոկտեմբերի 19-ին Հայաստանը դարձավ «Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին» Բեռնի հանրահայտ կոնվենցիայի լիիրավ անդամ, ինչի շնորհիվ՝

1. կարգավորվում էին հեղինակային իրավունքների լայն համակարգի ամենաբարդ օղակի՝ գրականության և արվեստի երկերի պահպանության խնդիրները,

2. ստեղծագործություններն ինքնաբերաբար պահպանվում էին Կոնվենցիային մասնակից բոլոր երկրներում, որի շնորհիվ հեղինակները կարող էին ֆինանսական օգուտ ստանալ իրենց ստեղծագործությունների իրացման շուկաների ընդլայնումից,

3. հեղինակներին հնարավորություն էր ընձեռվում իրենց ստեղծագործությունների համար չփնտրել հրատարակիչներ և տարածողներ այն երկրներում, որոնք արդեն Կոնվենցիայի անդամ էին և ապահովում էին ստեղծագործությունների պահպանությունը,

4. աճում էր տեղացի հեղինակների՝ մրցակցության մեջ մտնելու հակումը,

5. անկախ սոցիալական և տնտեսական զարգացման մակարդակից երկիրը դառնում էր հեղինակային իրավունքի պահպանության, ապրանքների ու ծառայությունների միջազգային առևտրական կառույցների մի օղակը՝ արդեն պահպանված հեղինակային իրավունքով: Դա կարևորվում է մշակույթի, տեղեկատվության և տեխնոլոգիաների փոխանակման բնագավառում: Ավելին, Բեռնի Կոնվենցիայի հիմնական ստանդարտների ընդգրկումը TRIPS-ի Համաձայնագրում ցույց է տալիս, որ պահպանվում են մտավոր սեփականության պահպանության նվազագույն ստանդարտները, փաստորեն, երկրի համար պարտադիր էին դառնում տնտեսական նշանակալի փոխանակումները՝ հիմնվելով միջազգային առևտրի վրա:

6. Բեռնի Միությանն անդամակցությունը կարևոր ազդանշան էր երկրի քաղաքական կամքի արտահայտության համար, կամք, որ հանդես է բերում պետությունը հեղինակների իրավունքների պահպանության ոլորտում: Այդ ազդանշանը կարող է դիտվել նաև որպես նախապայման միջազգային բարենպաստ համագործակցության համար՝ ներառյալ արտասահմանյան ներդրումները տնտեսության տարբեր բնագավառներում:

Ամենակարևորը՝ ետպատերազմյան շրջանում նորաստեղծ պետությունները անկարող էին մրցակցելու կամ համագործակցելու զարգացած երկրների հետ հատկապես այս ոլորտներում, ուստի առաջանում էր նոր զարգացող երկրներին արտոնություններ տալու անհրաժեշտությունը: Այս առումով մեծ նշանակություն ունեցավ 1971 թվականին Փարիզում կայացած՝ Բեռնի Կոնվենցիայի վերանայումը, որն առանձին լրացուցիչ բաժին նախատեսեց զարգացող պետությունների համար և սահմանեց որոշակի արտոնություններ, որոնք հիմնավորվում էին այդ պետությունների տնտեսական վիճակով և սոցիալ-մշակութային պահանջներով: Հիմնական արտոնությունն այն էր, որ արտասահմանյան հեղինակները գրկվում էին բացառիկ իրավունքից երկու ձևերի՝ թարգմանության և վերարտադրելու համար, այսինքն՝ երբ հրատարակիչը կարող է թարգմանել և վերարտադրել ստեղծագործությունը վճարելով հեղինակային հոնորարը այն դեպքում, երբ հեղինակը հրաժարվել է վաճառել իր իրավունքները:

2001 թ. մարտ-ապրիլ ամիսներին Երևանում կազմակերպվեց երեք շաբաթ կարևոր սեմինար՝ նվիրված հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանության հարցերին: ԲՀԻ ՕՀ ֆինանսական օգնությամբ ՀԱԱ 60 անդամների համար կազմակերպված երկօրյա սեմինարի ժամանակ հեղինակային և հարակից իրավունքների համաշխարհային կանոնակարգի մասին զեկուցումով հանդես եկավ ՀԱԱ-ի հրավերով Երևան ժամանած «Փիրսըն Էդուբեյջն» անգլիական ընկերության իրավական մենեջեր, միջազգային փորձագետ Լինետ Օուենը (ՀԱԱ-ն հրատարակեց նաև նրա գիրք-ուղեցույցը՝ հեղինակային իրավունքի գնման և վաճառքի մասին): Այնուհետև Երևան ժամանեցին Մաքս Պլանկի անվան մրցակցության, հեղինակային, արտոնագրային օտարերկրյա և միջազգային իրավունքի ինստիտուտի միջազգային իրավունքի վարչության պետ, Դոկտոր Զիլկե Ֆոն Լևինսկին (գերմանիա), Առևտրի համաշխարհային կազմակերպության մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների առևտրային ասպեկտների և անցումային տնտեսություն ունեցող երկրներում հեղինակային իրավունքին ուղղված բարեփոխումների գծով միջազգային առաջավոր փորձագետ, պարոն Սթիվեն Մ. Շիֆմանը (ԱՄՆ), որոնք քաղաքական և իրավական հարցերով հայ-եվրոպական խորհրդատվական կենտրոնի (AEPLAC) և հեղինակային իրավունքի ազգային մասնագետների հետ

միասին հայ հեղինակներին ու հրատարակիչներին ծանոթացրեցին միջազգային ասպարեզի գործընթացներին:

Այսպիսով, չնայած Հայաստանի անկախության 20 տարիների ընթացքում ընդունվեց ՀՀ օրենքը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», հեղինակային և հարակից իրավունքներին վերաբերող մի շարք հոդվածներ մտցվեցին Քաղաքացիական, Մաքսային, Քրեական, Վարչական օրենսգրքերի և օրենսդրական այլ ակտերի և, որ ամենակարևորն է՝ ՀՀ սահմանադրության մեջ, Հայաստանի Հանրապետությունը միացավ Հեղինակային իրավունքին և հարակից իրավունքներին վերաբերող միջազգային բոլոր կոնվենցիաներին ու Եվրամիության դիրեկտիվներին, սակայն Հրատարակիչների ազգային ասոցիացիայի կողմից հընթացս իրականացվող դիտարկումները միաժամանակ վկայում էին, որ, անտեսելով գործող օրենսդրական ակտերն ու հեղինակների և հրատարակիչների իրավունքները, գրահրատարակության ասպարեզի պատճենահեռնները հետզհետե սկսում էին ակտիվացնել իրենց ապօրինի գործողությունները՝ թույլ տալով հեղինակային և հրատարակչական իրավունքների կոպիտ խախտումներ: Ճիշտ է, հանրապետությունում արձանագրվող գրքի ապօրինի վերարտադրման դեպքերի նկատմամբ որոշ պատժամիջոցներ երբեմն ձեռնարկվում էին, սակայն ՀՀ ՆԳ բաժիններն ու հարկային մարմինները անհրաժեշտ խստությամբ ու համարժեք միջոցներ չէին ձեռնարկում գրահրատարակության ոլորտում նկատվող իրավախախտումների կանխարգելման ուղղությամբ: Ահա թե ինչու, գնալով պատճենահեռնության ալիքը էլ ավելի ուժգնացավ՝ հետագայում հասնելով աննախադեպ չափերի:

Ընդհանրապես, իրավախախտման դեպքերը կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

- այլ հրատարակչի կողմից գրքի անօրինական վերահրատարակումը,
- գրքերի անօրինական մեծաքանակ վերարտադրությունը,
- արտերկրի հեղինակի ստեղծագործության թարգմանությունն ու հրատարակումը՝ առանց հեղինակային իրավունքը ստանալու, թարգմանիչի անունը նշելու և հոնորարը վճարելու,
- գրադարանների կողմից գրքի օրինակների լուսապատճենումը:

2007-2008 թվականներից սկսած գնալով լայն տարածում ստացավ հատկապես տարբեր հրատարակչությունների գրքերի ապօրինի վերարտադրության արատավոր պրակտիկան: Այսպես, օրինակ՝

«Հայաստան» հրատարակչության «Հայկական խոհանոց» գիրքը մեծ տպաքանակով հրատարակվեց անհատ հեղինակի կողմից: Հրատարակչության վաճառքը դադարեցվեց, կազմվեց քրեական գործ, դատավճռով որոշվեց գանձել 700000 դրամ՝ հօգուտ հեղինակի ժառանգի:

Նույն հրատարակչության «Հայերեն-անգլերեն բառարանը» ապօրինի տպագրած անձինք չնայած պատասխանատվության ենթարկվեցին, վնասը փոխհատուցվեց, ոստիկանության աշխատակիցների կողմից գործը հանձնվեց դատաքննչական մարմիններին, սակայն հետագայում և մինչև օրս էլ այդ անօրինականությունը շարունակվում է:

«Ապոլոն» հրատարակչությունը տպագրել էր Ավ. Իսահակյանի «Ուստա Կարո» վեպը՝ առանց հեղինակի ժառանգի հետ պայմանագիր կնքելու՝ չիմանալով հեղինակային իրավունքների նոր ժամկետի մասին: Ի վերջո, հրատարակիչը գրքի տպաքանակի 50 տոկոսը (500 օրինակ) հատկացրեց հեղինակի թոռանը՝ Ավիկ Իսահակյանին:

«Ապոլոն» հրատարակչությունը հրատարակել էր Գուրգեն Մահարու «Հատընտիրը», որի տպաքանակի (1500 օրինակ) 1000 օրինակը, երկարատև բանակցություններից հետո ի վերջո, բաշխվեց հեղինակի այրուն և որդիներին:

Չնայած «Ոսկան Երևանցի» հրատարակչության հեղինակ Ռուբինա Նազարյանի. «Շարադրությունների ժողովածուի» «ձախ» քանակությունները ժամանակին բռնագրավվել էին ոստիկանության կողմից, մեղավորները պատասխանատվության էին կանչվել, կազմվել էր քրեական գործ, սակայն մինչև օրս այդ գրքի պիրատական հրատարակություններն առկա են գրաշուկայում:

«Զանգակ» հրատարակչությունը տարիներ առաջ հրատարակել էր Սենտ Էկզյուպերիի «Փոքրիկ իշխանը» գիրքը՝ առանց հիշատակելու թարգմանչի՝ Սաղաթել Հարությունյանի անունն ու առանց զետեղելու նրա առաջաբանը: Ի վերջո, հրատարակչությունը բարեխղճորեն փոխհատուցեց թարգմանչի վնասը՝ վճարելով նրա պահանջած գումարը և հրատարակեց լրացուցիչ տպաքանակ՝ թարգմանչի առաջաբանով ու տրամադրեց թարգմանչին: Էկզյուպերիի իրավունքների

վերջնաժամկետը լրանում է 2014 թվականին: Եվ չնայած «Փոքրիկ իշխանի» հայերեն հրատարակության իրավունքները թեկուզ կարճ ժամանակամիջոցի համար հետագայում գնեց «Անտարես» հրատարակչությունը, սակայն վերջին 1-2 տարվա ընթացքում որոշ հրատարակիչների պատվերով «Փոքրիկ իշխանի» մի քանի թարգմանություն է իրականացվել՝ առանց «Անտարես» հրատարակչության համաձայնությունը ստանալու:

Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրինությունը Մամարայում հրատարակել էր «Մարտիրոս Սարյան» ուշագրավ ալբոմը, սակայն Մ. Սարյանի ժառանգները նյութական որևէ փոխհատուցում չէին ստացել: Իրավական միջամտությունից հետո միայն ժառանգների իրավունքները վերականգնվեցին, հրատարակիչը պայմանագիր կնքեց ժառանգի հետ և հատկացրեց համարժեք տպաքանակ:

Էջմիածնի հրատարակչությունը լույս էր ընծայել «Սուլամիթա. Պարույր Սևակի ուշացած սերը» երկհատորյակը՝ որի տպաքանակը վաճառքից հանվեց Պարույր Սևակի ժառանգների պահանջով: Տեղի էր ունեցել հեղինակի բարոյական իրավունքների ոտնահարում, Սևակի սիրային նամակները տպագրվել էին առանց Սևակի ժառանգների թույլտվության:

Վերջին տասնամյակում Համո Սահյանի ստեղծագործությունների մեկ տասնյակ գրքեր են հրատարակվել տարբեր հրատարակիչների կողմից, սակայն նրա որդին ոչ մի փոխհատուցում չի ստացել նրանցից: Ժառանգի հետ ոչ մի անգամ պայմանագիր չի կնքվել, իսկ այժմ որդին՝ Նաիրի Սահյանը պատրաստվում է պատասխանատվության կանչել հրատարակիչներին:

Էդուարդ Սարյանի «Անձանոթ Հայաստան» ալբոմը հրատարակվել էր Իսրայելում: Հեղինակի իրավունքները սեփականացրած հրատարակչի հետ Երևանում կայացած հանդիպման ժամանակ հեղինակի պահանջները լիովին չեն բավարարվել: Հեղինակի իրավունքներն այսօր էլ շարունակվում են խախտվել: Ներկայումս նա պատրաստվում է դիմելու դատական ատյաններին:

«Արևիկ» հրատարակչությունը, առանց համապատասխան պայմանագիր կնքելու, վերահրատարակել էր «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիրքը, որի կազմողին հետագայում բարեխղճորեն դրամական փոխհատուցում է վճարել:

ԵՊՀ հրատարակչության «Ֆրիտյոֆ Նանսեն. Թշվառ ժողովուրդ» գիրքը նույնությամբ և երկու անգամ վերատպել էր «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամբ: Երևանի Համալսարանի հրատարակչության, թարգմանչի և հիմնադրամի ղեկավարության բանակցություններն ի վերջո ավարտվեցին հեղինակին համարժեք վարձատրություն հատկացնելու միջոցով:

«Դուդուկի ձեռնարկ» գիրքը ապօրինաբար վերահրատարակվել էր առանց որևէ փոփոխության: Հեղինակը դիմել էր դատական աստյաններին՝ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու պահանջով, սակայն նրա պահանջները ամբողջությամբ չէին բավարարվել:

Հրաչյա Քոչարի «Սպիտակ գիրքը» ստեղծագործության տպաքանակի որոշ մասը ուշացումով հատկացվեց հեղինակի աղջկան, քանի որ վերջինիս հետ հստակ պայմանավորվածություն չէր ձեռքբերվել:

Գարեգին Սևոյանի «Կենսաբանության խնդիրների ժողովածու» (8-10-րդ դասարանների համար) դասագիրքը վերարտադրել էին «Շաղիկ» և «Նոր դպրոց» հրատարակչությունները: Դատաքնությունից հետո միայն օրինախախտները վճարեցին հասանելիք հոնորարը:

«Արևելյան սիրավեպեր» գրքի կազմող Ադասի Սահակյանը դիմել էր իրավապահներին՝ պահանջելով պատասխանատվության կանչել իր հեղինակային իրավունքները սեփականացրած հեղինակին: Հարցի քննությունից հետո հեղինակի իրավունքները վերականգնվել էր, վնասը՝ փոխհատուցվել:

«Քիմիայի խնդիրների ժողովածու» գրքի քսերոքսային տպաքանակը բռնագրավվել էր իրավապահների կողմից, մեղավորները պատասխանատվության էին ենթարկվել:

«Լույս» հրատարակչության «Հայերեն-անգլերեն» բառարանի ռեպրոգրաֆիական վերարտադրությամբ թողարկված տպաքանակը բռնագրավվել էր իրավապահ մարմինների կողմից, հարուցվել էր քրեական գործ, սակայն գործին համարժեք ընթացք չէր տրվել:

Երկար ժամանակ ոտնահարվում էին հատկապես այն գրողների իրավունքները, որոնց ստեղծագործությունները հրատարակվում էին պետական պատվերով: Այդ հեղինակների մեծ մասը ընդհանրապես վարձատրություն չէր ստանում, իսկ պետպատվերով հրատարակվող գրքերի հեղինակների հետ

հրատարակիչները պայմանագիր առհասարակ չէին կնքում: Այդ հարցն արդեն կարգավորվել է, և այժմ առանց պայմանագրի ոչ մի ձեռագիր չի ընդունվում մրցույթի հանձնաժողովի կողմից: Հատկանշական է, որ այդ պայմանագրերով նախատեսվում են նաև հեղինակային հոնորարի վճարման կարգն ու չափը:

Երևանում գործող գրախանութների տնօրենները, որոնք զբաղված էին արտերկրից ներկրված գրականության վաճառքով, իրականացրած հետաքննության միջոցով կարողացան հայտնաբերել և պատասխանատվության ենթարկել այն պատճենահեներներ, որը ոչ միայն ոտնահարում էր արտերկրի հեղինակների գույքային իրավունքները, այլև, իր ապօրինի պատճենահանած պիրատական էժանագին գրքերի տպաքանակների վաճառքով, ֆինանսական շոշափելի վնաս էր հասցնում օրինապահ գրախանութներին: Պատճենահեներ ստիպված եղավ ոչնչացնել պիրատական գրքերը և հրաժարվել մյուսների արդար աշխատանքի հաշվին հարստանալու զբաղմունքից, սակայն շուտով նրան փոխարինելու եկան նորերը:

Պատճենահեներությունը նոր ժամանակների չարիքն է, անհա թե ինչու այսօր, մշակութային արժեքներ ստեղծելուց զատ, հրատարակիչը պետք է նաև քաջատեղյակ լինի «խաղի» բոլոր կանոններին ու օրենսդրությանը, որպեսզի վստահորեն կարողանա պաշտպանել իր և հեղինակների շահերն ու իրավունքները:

Հրատարակիչների ազգային ասոցիացիայի մի խումբ անդամների աջակցությամբ վերջին տարիներին որոշակի միջոցառումներ են իրականացվել պատճենահեներների գործունեությունը կանխարգելելու ուղղությամբ: Առաջին քայլը, որ ձեռնարկվել է նրանց դեմ, կապված էր «Օքսվորդ» հրատարակչության գրականության պիրատական խմբաքանակների վաճառքը կասեցնելու հետ: Բողոքնամակը մեզ էր ներկայացրել Երևանում գործող համանուն գրախանութի տնօրինությունը: Այդ նպատակով գրախանութ հրավիրված գրավաճառների հետ համատեղ կազմակերպված զրույցի ընթացքում կողմերի միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց բնօրինակ գրքերը գրավաճառներին տրամադրել նրանց իսկ առաջարկած գներով՝ պատճենահեներ օրինակներից հրաժարվելու պայմանով: Ցավոք, վերջիններս շուտով դրժեցին իրենց խոստումը, որից հետո գրախանութի տնօրինությունը դիմեց ոստիկանությանը: Անցան ամիսներ, սակայն պիրատական հրատարակչություններն այդպես էլ չվերացան գրաշուկայից:

Հաջորդ քայլը նախաձեռնեց «Զանգակ» հրատարակչության տնօրինությունը: Նրանք գտան Երևանի ու ՀՀ մարզերի գրեթե բոլոր պատճենահեններին, մեզ հետ միասին կազմակերպեցին Կլոր սեղան՝ նրանց և ՀԱԱ անդամ-հրատարակիչների մասնակցությամբ: Խիստ ներկայացուցչական այդ հավաքի ընթացքում պատճենահենները կրկին խոստացան այսուհետ հրաժարվել պատճենահեն հրատարակություններից, իսկ հրատարակիչները պարտավորվեցին խախտողներին զրկել իրենց գրքերը վաճառելու իրավունքից: Ներկաները ստորագրեցին նաև **Հրատարակչի և Գրավաճառի Բարոյական Կոդեքսը**, որը կազմել էր ՀԱԱ տնօրինությունը: Կարճ ժամանակ անց պատճենահենները երես թեքեցին իրենց իսկ ստորագրած Բարոյական Կոդեքսից ու կրկին անցան իրենց ապօրինի գործունեությանը:

Հարկ է նշել, որ իրավական դաշտում գրահրատարակչության համար ազատորեն գործելու նպաստավոր պայմաններ են ստեղծվել մեր հանրապետությունում: Ի տարբերություն խորհրդային ժամանակների, հրատարակչությունը, տպարանը կամ գրախանութը, անկախ գործունեության բնույթից (մշակույթ-արտադրություն-առևտուր) և համաձայն «Ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքի, ներկայումս ունեն միևնույն իրավական կարգավիճակը (ՍՊԸ, ԲԲԸ, ՓԲԸ և այլն): Այսինքն, նրանցից յուրաքանչյուրն ունի և՛ հրատարակելու, և՛ տպագրելու և՛ վաճառելու իրավունք, ինչը նախկինում խստորեն արգելված էր: Դրա շնորհիվ էր, որ արդեն 2000 թ. Հայաստանում հրատարակվեց գրեթե այնքան անուն գիրք, որքան որ լույս էր տեսել 1989 թվականին Խորհրդային Հայաստանում:

Ստորև ներկայացվում են 1989-2000 թվականներին լույս տեսած գրքանուններն՝ առանց տպաքանակների.

1989 - 1100 գրքանուն	1995 - 376-/-
1990 - 817 -/-	1996 - 396-/-
1991 - 536 -/-	1997 - 429-/-
1992 - 311 -/-	1998 - 535-/-
1993 - 258 -/-	1999 - 650-/-
1994 - 224 -/-	2000 - 1003-/-

2000 թվականից ի վեր գրքանունների թիվն ամեն տարի աճում է: Այժմ հանրապետությունում լույս է տեսնում ավելի քան 2500 գրքանուն, գործում են ավելի քան 200 հրատարակչություն և տարբեր կազմակերպությունների հրատարակչական բաժիններ, շուրջ 100 տպագրատներ: Վերջին տարիներին բացվել է 5 նոր գրատուն: Հատկապես լայն հնարավորություններ են ստացել հեղինակները, որոնք այժմ արդեն իրավունք ունեն հրատարակելու իրենց գրքերը՝ շրջանցելով հրատարակիչներին: Այսօր Հայաստանում տարեկան լույս է տեսնում շուրջ 350 հեղինակային հրատարակություն:

Ընդհանուր գրքարտադրանքի մեջ պետական պատվերով հրատարակված գրքերը կազմում են 5-7 տոկոս: Շատ հրատարակչատներ շահութաբեր գրքերը տպագրում են սեփական միջոցներով: Ցավոք, արդյունքը, հասկանալի պատճառներով, դեռևս չի գոհացնում հրատարակիչներին ու հեղինակներին և չի լուծում բոլորին անհանգստացնող հիմնախնդիրները՝ գրաշուկայի կարգավորման, բիզնեսի ակտիվացման, հեղինակային ու հրատարակչական իրավունքների պահպանության ու հեղինակներին համարժեք վարձատրություն տրամադրելու առումով: Մտահոգիչ է նաև իրավական դաշտի անկատարությունը, որը բացասաբար է անդրադառնում ստեղծագործությունների հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանության ապահովման վրա: Նման իրավիճակը ոչնչով չի նպաստում պատրաստի տպաքանակների վաճառքի և արտերկրի հրատարակչությունների հետ փոխհամագործակցության ակտիվացմանը: Ավելին, այսօր Հայաստանի մայրաքաղաքում և բոլոր մարզերում աննախադեպ չափերի են հասել պիրատական հրատարակությունների քանակությունները, ասպարեզում հայտնվել են պատճենահեն տպարաններ, որոնք իրենց էժանագին հրատարակություններով մեծ վնաս են հասցնում բարեխիղճ արտադրողներին: Գրահրատարակչական ոլորտում տիրող լարված իրավիճակը գնալով ավելի է սրվում՝ հարևան երկրներից /Իրան, Թուրքիա/ ներկրվող պիրատական հրատարակությունների պատճառով: Առավել անհանդուժելի պետք է համարել այն իրողությունը, երբ արտերկրի հրատարակիչները ստիպված են լինում փաստաբաններ վարձել՝ իրենց հրատարակչական իրավունքները Հայաստանի գրաշուկայում պաշտպանելու նպատակով:

Այսպես՝ անգլիական «Փիրսոն խումբ» հրատարակչական հոլդինգը, որի կազմում ընդգրկված է ևս 4 հրատարակչություն, ինչպես նաև Քեմբրիջի համալսարանի հրատարակչությունը վերջերս փաստաբան են վարձել /Նաիրա Մկրտչյան/ Իրանից ներկրված իրենց բազմաբնույթ գրականության պիրատական քանակությունները բռնագրավելու նպատակով: ՀՀ Ոստիկանությանը փաստաբան Նաիրա Մկրտչյանը ներկայացրել է բողոք, որում շարադրված հանգամանքները պարզելու նպատակով Ոստիկանության կազմակերպված հանցագործության դեմ պայքարի վարչության մտավոր սեփականության և հեղինակային ու հրատարակչական իրավունքների խախտումների դեմ պայքարի բաժինը ներկայումս արդեն հայտնաբերել է այն գրախանութները, որտեղ վաճառքի են հանվել նշված հրատարակչությունների կոնտրաֆակտ քանակությունները, ինչպես նաև երևանյան այն տպարանը, որտեղ նույնպես տպագրվել է այդ ապօրինի գրքարտադրանքը: Վարույթին մասնակցում է նաև «Մանմար» հրատարակչությունը, որը վերոնշյալ հրատարակչությունների գրքարտադրանքը Հայաստանում իրացնող բացառիկ ներկայացուցիչն է: Մենք «Մանմար» հրատարակչության տնօրենին և փաստաբան Նաիրա Մկրտչյանին հրավիրել ենք մեր սեմինարին՝ խնդրելով սեմինարի մասնակիցներին առավել հանգամանորեն ներկայացնել ստեղծված իրավիճակը:

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքում 2006 թվականին կատարվեցին մի շարք լրացումներ՝ կապված հրատարակչական ոլորտի հետ: Քննարկումներին, որոնք ընթանում էին ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում՝ մասնակցում էր նաև Հրատարակիչների ազգային ասոցիացիայի գործադիր խորհրդի պատվիրակը: Ու չնայած մեզ այդպես էլ չհաջողվեց լիովին վեր հանել հրատարակչական իրավունքի խնդիրները, որոնք, ի դեպ, մինչև օրս էլ լիովին չեն պարզաբանված ՀՀ օրենքներով, կցանկանայինք մեջ բերել ՀՀ օրենքի որոշ հոդվածների դրույթները, որոնց մի մասը Գործակալությունում տեղի ունեցած քննարկումների արդյունքը պետք է համարել/ներկայացվում են քաղվածաբար/.

Հոդված 52. Հարակից իրավունքների ծագման պայմանները և այդ

իրավունքների մասին ծանուցումը

1. Հարակից իրավունքների ծագման և իրագործման համար գրանցման կամ որևէ այլ գործողության կատարում չի պահանջվում:

Հոդված 55. Հրատարակչի իրավունքը

1. Հրատարակությունների հրատարակչական ձևավորումների նկատմամբ բացառիկ իրավունքները պատկանում են տվյալ ձևավորումն իրականացրած հրատարակչին:

2. Հրատարակիչն իրավունք ունի արգելելու կամ թույլատրելու երրորդ անձանց իր հրատարակությունների հրատարակչական ձևավորումների վերարտադրությունը:

3. Հրատարակիչը կարող է իրեն պատկանող գույքային իրավունքները պայմանագրով լրիվ կամ մասնակիորեն փոխանցել այլ անձի:

4. Հրատարակիչը կարող է պայմանագրով այլ անձանց փոխանցել նաև հրատարակչական ձևավորումն օգտագործելու իրավունքը: Պայմանագրում նշվում են օգտագործման ժամկետը, վարձատրության չափն ու վճարման կարգը, տարածքը և այլն:

5. Հրատարակչական ձևավորման նկատմամբ գույքային իրավունքները կարող են ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով կամ իրավատեր իրավաբանական անձի վերակազմակերպման հետևանքով փոխանցվել այլ անձի:

Հոդված 56. Անտիպ ստեղծագործությունների պահպանությունը

Ցանկացած անձ, որը գույքային իրավունքների գործողության ժամկետի ավարտից հետո առաջին անգամ օրինական ճանապարհով հրատարակում կամ այլ միջոցներով հանրությանը մատչելի է դարձնում անտիպ ստեղծագործությունը, օգտվում է հեղինակի՝ սույն օրենքով նախատեսված գույքային իրավունքներին համարժեք իրավունքներից:

**Հոդված 57. Քննադատական և գիտական աշխատությունների
հրատարակությունների նկատմամբ իրավունքը**

1. Յանկացած անձ, որը պատրաստում է հանրության սեփականությունը դարձած աշխատությունների քննադատական կամ գիտական հրատարակությունները, որոնք էականորեն տարբերվում են տվյալ աշխատության արդեն հայտնի հրատարակություններից, օգտվում է հեղինակի՝ սույն օրենքով նախատեսված գույքային իրավունքներին համարժեք իրավունքներից:

2. Սույն հոդվածի առաջին մասի դրույթը տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ հանրության սեփականություն դարձած աշխատությունն ինքնին հեղինակային իրավունքի օբյեկտ չէ:

Հեղինակի հետ կնքված գրավոր պայմանագիրը կարող է լինել բացառիկ կամ ոչ բացառիկ, հատուցելի, նրանում պետք է հստակ նշվեն գրական գործը հրատարակելու, թարգմանելու, վերահրատարակելու իրավունքը (քանի որ պայմանագրում չընդգրկված իրավունքները պատկանում են հեղինակին), օգտագործման ժամկետը, հեղինակին վճարվող վարձատրության չափը, ժամկետը, վճարման ձևերը՝ միանվագ, թե՛ մաս-մաս, օգտագործման սկզբում և վերջում:

Վարձատրությունը միանգամից վճարելու դեպքում պայմանագրում սահմանվում է ստեղծագործության առավելագույն տպաքանակը: Հեղինակն իրավունք ունի ստեղծագործության յուրաքանչյուր օգտագործման դիմաց ստանալու հեղինակային վարձատրություն բացառությամբ օրենքով սահմանված ազատ օգտագործման դեպքերի:

Հեղինակային պայմանագրով պետք է որոշվի ստեղծագործության օգտագործման տարածքը, այսինքն՝ օրինակները պետք է վաճառվեն Հայաստանի տարածքում, թե նաև Հայաստանից դուրս: Վերջինիս դեպքում պետք է հաշվի առնել որ Հայաստանից դուրս ստեղծագործության օրինակի վաճառքի գինը սովորաբար ավելի բարձր է սահմանվում, որի հետևանքով էլ վարձատրությունն էլ համեմատաբար ավելի բարձր պետք է լինի: Եթե հեղինակային պայմանագրում չի

նշվել ժամկետ, ապա պայմանագիրը գործում է հինգ տարի, իսկ եթե տարածքը չի նշվել, ապա այն գործում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում:

Նմանատիպ դրույթներ են սահմանված նաև հրատարակիչների համար:

Իրավախախտում համարվող գործողությունները սահմանված են Օրենքի 65-րդ հոդվածով. այն է՝ ստեղծագործության կամ դրա էական մասի օգտագործումն առանց նախապես իրավատիրոջ թույլտվության ձեռքբերման, ստեղծագործության օրինակների պատրաստումն առանց իրավատիրոջ նախապես ձեռք բերված թույլտվության, այդպիսի օրինակների վերարտադրությունը, գրագողությունը՝ ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և այդ մտքերը իրեն վերագրելը կամ իր անվամբ ներկայացնելը:

Հեղինակային և հարակից իրավունքների խախտման դեպքերում, երբ այդ արարքը կատարվում է զգալի կամ խոշոր չափերով, այժմ կիրառվում է ՀՀ Քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածը, որը ուժի մեջ է մտել 2011թ. մարտի 1-ից: Ըստ 158 հոդվածի՝ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, ինչպես նաև առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով ցանկացած տեսակի կրիչի վրա տարածելը և (կամ) վաճառելը՝ եթե այդ արարքը կատարվել է զգալի չափերով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

Նույն արարքը, որը կատարվել է՝

- 1) պաշտպանիչ տեխնիկական միջոցների շրջանցմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) մեկից ավելի անգամ,
- 4) ստացված դրոշմապիտակները դրանց օգտագործման համար չնախատեսված ստեղծագործությունների կրիչների վրա փակցնելով,
- 5) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երկուհազարապատիկը չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Զգալի չափերով է, եթե լիցենզիայի արժեքը կազմում է 50000–200000 դրամ, խոշոր չափերով, եթե լիցենզիայի ընդհանուր արժեքը գերազանցում է 200.000 դրամը:

Իրավախախտում պարունակող արտադրանքը սահմանով անցկացնելու դեպքերը կանխելու նպատակով իրավատերը ՀՀ Մաքսային օրենսգրքի 14-րդ բաժնի դրույթների համաձայն, եթե բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով կարող են տեղափոխվել իր մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքներ, կարող է վերադաս մաքսային մարմին ներկայացնել դիմում (այսուհետ՝ կասեցման դիմում)՝ մտավոր սեփականության օբյեկտի գրանցման և ցանկացած մաքսային ռեժիմով այդ ապրանքների բացթողումը կասեցնելու խնդրանքով:

Ներկայումս մշակման ընթացքում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին նոր օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հստակեցնել որոշ իրավունքներ, ընդլայնել հեղինակի իրավունքների սահմանափակումներն ու բացառությունները գրադարանների, կրթական ու մշակութային հաստատությունների համար, ուժեղացնել պաշտպանական դրույթները:

Ցավոք, Օրենսդրական դաշտում վերջին տարիներին իրականացված փոփոխություններն ու ձեռնարկված պատժիչ միջոցառումները մինչև օրս որևէ դրական արդյունք չեն տվել: Ավելին, պիրատական ոտնձգությունները գնալով ավելի մեծ չափերի են հասնում՝ առանց հաշվի առնելու հեղինակների անձն ու ներդրումը մշակույթի անբաժանելի մաս կազմող գրահրատարակչական ասպարեզում: Այդ մասին են վկայում նաև ստորև ներկայացվող աղաղակող փաստերը, որոնք մեզ են տրամադրել հեղինակները կամ նրանց ժառանգները.

Զուլիետա Ղարիբյանի, Պետրոս Բեդիրյանի և Նորա Անմեդիկյանի հեղինակությամբ 1987 և 1988 թվականներին հրատարակված և բարձր պահանջարկ ունեցող «Ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարանը դեռևս 2005 թվականին հրատարակվել է ՌԴ Կրասնոդարի մարզի համանուն քաղաքի «Կոգորտա» հրատարակչության կողմից, նույն վերնագրով: Սակայն որպես գրքի կազմող հանդես է եկել Երևանի ֆրանսիական համալսարանի գրախանութի վաճառող Էդիկ Կ. Կյանը, որպես խմբագիր՝ Կ.Բ Կյանը պիրատի հայրը, որը մետրոպոլիտենի կայաններից մեկում գիրք ու թերթ էր վաճառում: Գիրքը նույնիսկ հովանավոր է ունեցել: Հեղինակները ժամանակին դիմել են ՀՀ Ոստիկանություն, նրանց կողմից

կատարվել է Է. Կլյանի բնակարանի խուզարկություն, որի ժամանակ բռնագրավվել է առկա պիրատական քանակությունը: Դրանից հետո պատճենահենը մի չնչին գումար է վճարել հեղինակներին՝ բռնագրված մի քանի գրքերի հաշվարկով հասցված վնասի չափով: Տարիների ընթացքում գիրքը պարբերաբար վաճառվել է Կրասնոդարում, իսկ ՀՀ Ոստիկանության նամակներին որևէ պատասխան չի տրվել մինչև օրս: 2011թ. վերջին անգամ ՀՀ Ոստիկանությունը դիմել է ՌԴ իր գործընկերներին, նրանք պահանջել են փորձագիտական եզրակացությունը՝ իբր գործին ընթացք տալու նպատակով, առանձին նամակ՝ հեղինակներից, սակայն անցել է ևս մեկ տարի, իսկ հեղինակները ոչ մի արդյունքի չեն հասել մինչև օրս: Վերջիններս անվանի գիտնականներ են ու պատկառելի տարիքի անձինք, որոնք դեռևս հույս ունեն ստանալու իրենց հասանելիք վարձատրությունը:

Արարատ Ղարիբյանի «Ռուս-հայերեն» բառարանի վերահրատարակության հարցով այժմ հետաքրքրված են մի շարք հրատարակիչներ ու անհատներ, որոնցից և ոչ մեկը դեռևս պայմանագրային հարաբերությունների մեջ չի մտել հեղինակի ժառանգների հետ: Իսկ ահա նրանցից «ամենահամարձակը» արդեն հրատարակել է պիրատական տարբերակը, որն այժմ վաճառվում է Երևանի բանուկ ու մարդաշատ Վերնիսաժում՝ 12000 դրամով: Այս գրքի պատճենահեն օրինակներն արդեն մի անգամ բռնագրավել է Ոստիկանությունը, սակայն, ինչպես տեսնում ենք, պիրատները որևէ մեկից վախենալու կամ զգուշանալու խնդիր չունեն:

ՀՀ գրաշուկան այսօր հեղեղված է ՌԴ «Պրոսվեշչենիե» հրատարակչության ուսումնական գրքերի պիրատական օրինակներով: Օրինական ճանապարհով ներկրողներն այլևս հնար չեն գտնում պատճենանենգության ճանապարհով հարստացող օրինազանցներին կարգի հրավիրելու համար: Նրանք նաև չեն ցանկանում դիմել ՀՀ Ոստիկանության համապատասխան ծառայության օգնությանը՝ դրական արդյունքի հույս չունենալու պատճառով:

Այս օրինակները կարելի է շարունակել, սակայն կարծում ենք, որ դրա կարիքը չկա: Վերը նշված պատճենահենության խայտառակ դրսևորումները մեր իրականության մեջ տեղ են գտնում միմիայն ՀՀ Ոստիկանության, ՀՀ դատախազության, ՀՀ դատական համակարգի, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և

նրա մտավոր սեփականության գործակալության, ՀՀ մշակույթի նախարարության, ՀԳՄ, «Հայհեղինակ» և «Հրատարակիչների ազգային ասոցիացիա» ՀԿ-ների ու մյուս կազմակերպությունների տարանջատված գործունեության հետևանքով: Ահա թե ինչու մենք առաջարկում ենք ստեղծել վերոնշյալ կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած խորհուրդ, մշակել պիրատության դեմ պայքարի քաղաքականության հայեցակարգ և ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

Մեր հրատարակիչների մեծ մասը պատկերացում չունի, թե ինչ քայլեր է պետք ձեռնարկել միջազգային գրական շուկա մուտք գործելու, այնտեղ իրենց հեղինակային և հրատարակչական իրավունքները պաշտպանելու, այդ իրավունքների խախտման դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու, միջազգային և ազգային տեղեկատուների միջոցով արտերկրի հրատարակչությունների վերաբերյալ տեղեկություններ քաղելու, իրենց գրքերը առաջարկելու և բանակցելու, լիարժեք տեղեկատվություն ստանալու մասին:

Հայաստանում ներկայումս թարգմանաբար լույս տեսնող գրքերը կազմում են ընդհանուր գրքարտադրանքի 6-8 տոկոսը: Առայժմ այլ լեզուներից հայերեն թարգմանությունների քանակը գերակշռում է օտար լեզուներով լույս տեսած մեր հեղինակների ստեղծագործություններին (համապատասխանաբար՝ 90 և 10%):

Եվրոպական Միության Արևելյան գործընկերության մշակութային ծրագրի աջակցությամբ իրականացվող «Գրքի հարթակ» ծրագրի շրջանակում հայերենից եվրոպական ու տարածաշրջանային 11 լեզուներով կատարված թարգմանությունների՝ վերջերս ՀԱԱ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունը ևս մեկ անգամ վկայում է այդ իրողության մասին: Այս փաստը խորապես անհանգստացնում է մեր հրատարակիչներին ու հեղինակներին, նրանք դեռևս չեն կարողանում Հայաստանում ստեղծված ոչ պակաս բարձրարժեք գործերը ըստ արժանվույն ներկայացնել արտերկրում՝ շարժելով արտերկրի հրատարակիչների հետաքրքրությունը:

Վիճակը շտկելու նպատակով Հրատարակիչների ազգային ասոցիացիան 1998-ից սկսած անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում Ֆրանկֆուրտի, Մոսկվայի և մի շարք այլ քաղաքներում կազմակերպվող գրքի միջազգային տոնավաճառներում Հայաստանի հրատարակիչների լավագույն հրատարակությունները ներկայացնելու

ուղղությամբ: Հայ հրատարակիչները վերջին 15 տարիներին միշտ էլ հնարավորություն են ունեցել տարածելու իրենց հրատարակած գրքերը և շահութաբեր պայմանագրեր կնքելու թե իրենց և թե հայ հեղինակների համար: Նրանք միշտ էլ ՀԱԱ-ից նաև հեղինակային և հրատարակչական իրավունքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն են ստացել:

Մեր հրատարակիչներին և հեղինակներին, անշուշտ, հարկավոր է էլ ավելի սերտ կապեր հաստատել ու համագործակցել ՀՀ մտավոր սեփականության գործակալության /պետ՝ Արմեն Ազիզյան/ և ՀՀ Ոստիկանության կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի վարչության մտավոր սեփականության և հեղինակային իրավունքների խախտումների դեմ պայքարի բաժնի /պետ՝ Արթուր Վարդերեսյան/ փորձառու մասնագետների հետ, որոնք միշտ էլ պատրաստակամություն են հայտնել իրենց խորհուրդներով հրատարակիչներին աջակցելու վերաբերյալ: Ներկա սեմինարին նրանց ակտիվ մասնակցությունը հենց այդ մասին է վկայում: Ավելին, ՀՀ Ոստիկանության վերը նշված բաժնի պետ Արթուր Վարդերեսյանի հետ արդեն համաձայնություն է ձեռք բերվել ոլորտում տեղ գտած հանցավոր ոտնձգությունների վերաբերյալ հրատարակիչներից ստացված դիմում-բողոքները ասոցիացիայի անունից նրանց պաշտոնապես ներկայացնելու և համատեղ ուսումնասիրելու մասին: Կարծում ենք նաև, որ մտավոր սեփականության փորձագետներ Սոնյա Վարդանյանի և Շուշան Մխիթարյանի զեկուցումների ու պատրաստած տեղեկատուի պարունակած տեղեկույթը նույնպես օգտակար կլինի ՀԱԱ անդամ-հրատարակիչներին իրենց առօրյա գործունեության ընթացքում:

Օգտվելով առիթից մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում սեմինարի կազմակերպիչներին՝ ՀՀ մշակույթի նախարարության, Հրատարակիչների միջազգային ասոցիացիայի, Next Page հիմնադրամի և Գրքի հարթակ ծրագրի ներկայացուցիչներին:

Վահան Խաչատրյան

ՀԱԱ ՀԿ գործադիր տնօրեն

07.11.2012 թ.

Երևան